

**С.С. АЛЕКСАНИЯН**

**ВЛИЯНИЕ ГОСУДАРСТВЕННОЙ ПОЛИТИКИ ЗАНЯТОСТИ РА  
НА РЫНОК ТРУДА**

Произведен анализ деятельности государственной службы занятости и законодательной базы, связанной со сферой занятости. Изучены работы, проведенные в этой области, на основе которых даны предложения по их совершенствованию.

**Ключевые слова:** занятость, рынок труда, безработица, предложение и спрос рабочей силы, оценка потребностей лиц, ищущих работу, программы занятости.

**S.S. ALEKSANYAN**

**THE IMPACT OF THE RA STAE EMPLOYMENT POLICY ON THE  
LABOUR MARKET**

A thorough study of the legislative framework and the state employment service activities related to the field of employment is carried out. The works implemented in that field are studied, based on which recommendations were given for the improvement.

**Keywords:** employment, labour-market, unemployment, labour supply and demand, assessing the needs of job seekers, employment program.

ՀՏԴ 1/14

**Գ.Վ. ԳԱԼՍՅԱՆ**

**ԳԻՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱՐԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՌԱՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ  
ՀԵՏՊՈՉԻՏԻՎԻԶՄՈՒՄ  
(Կապան)**

Դիտարկվում է գիտական տեսությունների փոխհարաբերություններում մրցակցող տեսությունների և ռացիոնալության չափանիշների ընտրության հարցը՝ հետպոզիտիվիզմի հիմնական ներկայացուցիչների շրջանում:

**Առանցքային բաներ.** գիտական տեսություն, հետպոզիտիվիզմ, ռացիոնալության սկզբունք, ֆալսիֆիկացիոնիզմ, հետազոտական ծրագիր, գիտական գիտելիք, ոչ գիտական գիտելիք:

Մրցակցող գիտական տեսությունների ընտրության չափանիշների (գիտության աճի) հիմնախնդիրը գիտության փիլիսոփայության կարևորագույն խնդրակարգերից է:

Հետազոտության նպատակն է ցույց տալ, թե մրցակցող գիտական տեսությունների ընտրության հարցում ինչպիսի հայեցակարգեր են առաջարկվում, և տվյալ գործընթացում ինչպիսի ռազմավարություն կարող է որդեգրել գիտական ռացիոնալությունը:

Ժամանակակից իմացաբանական բանավեճերում դեռևս կա այն սովորույթը, որ ռացիոնալությունը դիտվում է որպես համապատասխանություն «բանականության օրենքներին» [1,102]: «Բանականության օրենքները» հասկացվում են հիմնականում ձևական տրամաբանության օրենքները՝ որպես մտածողության օրենքներ: Այստեղից ստացվում է. «Ռացիոնալ է այն, ինչը համապատասխանում է ձևական տրամաբանությանը, ոչ ռացիոնալ կամ իռացիոնալ է այն, ինչը չի համապատասխանում ձևական տրամաբանությանը» [2,259]: Ս. Շվիրլին արտահայտում է այն միտքը, որ «ռացիոնալությունը իրականում կապված է նպատակահարմարության հետ, բայց ոչ նպատակաուղղվածության հետ» [3,14]:

Հետազոտիվիզմի հիմնական ներկայացուցիչ Թոմաս Կունը, գիտական գործունեության ընթացքում ուշադրություն դարձնելով գիտական հետազոտության ավանդույթների հիմնարար դերին և հոգեբանական իրավիճակներին, լայնացնում է գիտական ռացիոնալություն հասկացությունը: Ըստ Կունի հայեցակարգի՝ «գեշտալտի անցումը» (հոգեկան գործընթացների ուսումնասիրությունն իր ամբողջության մեջ) հանգեցնում է պլյուրալիզմի վերականգմանը՝ պատմականորեն իրար հերթափոխող ռացիոնալության ձևերին: Մի բանականության փոխարեն առաջանում են ռացիոնալության շատ տիպեր: Արդյունքում՝ հարցականի տակ են դրվում գիտական գիտելիքների համընդհանրությունը և անհրաժեշտությունը:

Նշենք, որ Կունի դեպքում հարացույցները (պարադիգմերը) գիտության զարգացման գործընթացի հիմնական չափորոշիչներն են: Տեսությունը պետք է ընտրել՝ ելնելով այնպիսի չափանիշներից, որոնք վերջին հաշվով անձնական ուսույթելիք են. կամ բոլորը մնում են իրենց կարծիքին (տեսությունների ընտրության հարցում), կամ ինչ-որ մեկին հաջողվում է ընդդիմախոսին դարձնել իր կողմնակիցը՝ ոչ ռացիոնալ փաստարկման հաշվին [4, 254-255]: Հենց այստեղ էլ որոշ փիլիսոփաներ Կունին մեղադրում են իռացիոնալության մեջ: «Ռացիոնալության պահանջներից է սուբյեկտիվության էլիմինացիան (բացառում, արտամղում)», - նշում է Վ. Պորուսը [5, 356]:

Ժամանակակից (ֆալիբալիստական) իմացաբանության ներկայացուցիչ Կարլ Պոպերը մրցակցող գիտական տեսությունների ընտրության հարցում փորձել է գտնել ավելի ռացիոնալ և ավելի ստույգ չափանիշներ: Անընդունելի համարելով էմպիրիզմի բովանդակազրկումը՝ նա առաջարկել է մեթոդաբանություն,

որը թույլ է տալիս փորձը համարել որոշիչ գործոն նույնիսկ «հասուն» գիտության մեջ [6, 155]:

Ֆալիբալիստական մոտեցման համաձայն՝ ոչ մի փորձ ինքն իրեն չի կարող ոչ ապացուցել, ոչ էլ հերքել ցանկացած տեսություն: Փորձը թույլ է տալիս բացահայտել, թե արդյոք սխալ կա՞ տեսությունների համակարգում:

Ըստ Պոպերի՝ անհրաժեշտ է առաջ քաշել հիպոթեզներ, որոնք կունենան մեծ թվով փորձնական (էմպիրիկ) բովանդակություն, քան իրենց նախորդները [7,322]: Որպեսզի չխախտվի այդ օրենքը, համաձայն Պոպերի, պետք է կատարել երեք պայման: Առաջինը՝ պետք է հետևել այն բանին, որ նոր տեսությունը բացատրի այն ամենը, ինչը բացատրել են նրան նախորդողները: Երկրորդ՝ նոր տեսությունը պետք է կանխագուշակի այնպիսի բան, ինչը չի կանխագուշակվել նախորդ տեսություններով: Այսինքն, նոր տեսությունը պետք է մատնանշի որոշ նոր փաստերի գոյության հնարավորությունը: Երրորդ՝ վատ չէր լինի, եթե այդ նոր ենթադրությունների, կանխագուշակումների որոշ մասը հաջողվի փաստացիորեն դիտարկել [7, 252]: Այս երեք պայմանները տանում են մի բանի. նախորդ տեսության համեմատությամբ նոր տեսությունը պետք է լինի ավելի բովանդակալից:

Գիտական տեսությունների փոխհարաբերության խնդրին առանձնահատուկ ուշադրություն է դարձրել Իմրե Լակատոսը, որը, ի տարբերություն Պոպերի, մրցակցող տեսությունների ընտրության հարցում ընդունում է տեսությունների էմպիրիկ բովանդակությունը նվազեցնող քայլերի հնարավորությունը. Անհրաժեշտության դեպքում կարող ենք թույլ տալ հետընթաց քայլեր (երբ հետազոտական ծրագրի կամ տեսության տեսական աճը չի գերազանցում էմպիրիկ աճը), այդուհանդերձ, չմոռանալով, որ գիտության նպատակը գիտելիքների բովանդակության մեծացումն է [8, 365-366]:

«Աշխարհի ճանաչման մեր փորձերում կա ռացիոնալության միայն մի տարր, դա մեր տեսությունների քննադատական դիտարկումն է», - գրում է Պոպերը [9, 157]: Իսոսելով «ֆալսիֆիկացնելիության» մասին՝ նա նկատի չունի, որ ցանկացած գիտական արտահայտություն իրականում պետք է հերքվի, այլ նկատի ունի այն, որ տեսությունը պետք է ունենա այնպիսի միջոցներ, որոնք ըստ իրենց ձևի և բնույթի թույլ են տալիս սխալական լինելու հնարավորությունը:

Ըստ Պոպերի՝ կարելի է ասել, որ ռացիոնալիզմը հակվածությունն է՝ լսելու քննադատական դիտողություններ և դրանք կիրառելու փորձի հիման վրա: Դա, ըստ էության, այն տեսակետն է, որը ենթադրում է՝ «ես կարող եմ սխալվել, մենք կարող ենք սխալվել, բայց, միանման պայմաններում կարող ենք աստիճանաբար մոտենալ ճշմարտությանը» [9, 168]: Ամեն մի քայլ, որը որոշ հայեցակար-

գեր պաշտպանում է քննադատությունից, քայլ է ռացիոնալությունից այն կողմ: Պետք է զարգացնել գաղափարներն այնպես, որ դրանք քննադատելի լինեն: Անհրաժեշտ է ոչ թե պաշտպանել, այլ գտնել գաղափարների թույլ կողմերը և վերացնել: Այսպիսին են քննադատական ռացիոնալիստների կողմից առաջարկված որոշ սկզբունքներ: Դրանք կոնկրետանում են բնական գիտությունների փիլիսոփայությանը դիմելիս: Բնագիտության մեջ քննադատությունը կապված է փորձերի և դիտարկումների հետ: Տեսությունների բովանդակությունը կազմված է այնպիսի բազիսային դրույթներից, որոնք դրանց հակասում են (դա նրա ֆալսիֆիկատորների դասն է): Բովանդակության աճը նշանակում է խոցելիության աճ, դրա համար էլ մեծ բովանդակությամբ տեսությունները նախընտրելի են քիչ բովանդակությամբ տեսություններից: Պոպերն առաջարկել է «նախվ մեթոդաբանական» ֆալսիֆիկացիոնիզմը (հերքելիության հայեցակարգ), որի համաձայն ընտրվում են որոշ տեսություններ [10, 303]: Նա ընդունում է, որ փորձն անհրաժեշտ է տեսությունների ընտրության համար. արդյունքում՝ հերքվում է այն տեսությունը, որն ունի քիչ բովանդակություն: Որևէ եզակի փաստ չի կարող հաստատել առաջադրված համընդհանուր բացատրող տեսության ճշմարտացիությունը: Փորձի արդյունքում ստացված եզակի փաստը կարող է միայն ցույց տալ առաջադրված համընդհանուր բացատրող տեսության սխալականությունը: Այս գործընթացն իրականացվում է որոշիչ փորձերի միջոցով:

Նշենք, որ տեսությունները չեն կարող դուրս բերված լինել փաստերից: Որպես հարացույց՝ ընտրված տեսությունը պետք է ավելի լավը թվա, քան նրա հետ մրցակցող տեսությունները, բայց պարտադիր չէ, որ այն բացատրի հանդիպող բոլոր փաստերը, որովհետև իրականության մեջ երբեք այդպես չի լինում: Այսինքն՝ մեր եզրակացություններն այն մասին են խոսում, որ հազիվ թե ինչ-որ տեսություն ամբողջովին համատեղելի լինի փաստերի հետ: Հարկ է նշել նաև, որ առանձին փաստով տեսությունը չի կարելի հերքել, քանի որ յուրաքանչյուր փաստ կախված է մեկնաբանող տեսությունից:

Լակատոսը նույնացնում է ինդուկցիայի հիմնախնդիրը (արդյոք փորձը կարո՞ղ է հիմնավորել տեսությունը) մրցակցող գիտական տեսությունների ռացիոնալ ընտրության, այսինքն՝ գիտական գիտելիքի աճի հիմնախնդրի հետ (ինչպե՞ս կարող է փաստը հիմնավորել տեսության ընտրությունը): Լակատոսն ընդունելի և պրոգրեսիվ է համարում այն տեսությունը, որն ունի հաստատված լրացուցիչ էմպիրիկ բովանդակություն նախորդ կամ մրցակցող տեսության համեմատությամբ, այսինքն՝ նոր տեսությունը, բացատրելով նախորդ տեսության բացատրած փաստերը, հայտնագործում է նաև նոր փաստեր, որոնք թույլ կտան մրցակցող տեսություններից ընտրել այն տեսությունը, որը կնպաստի գիտական

գիտելիքի աճին: Բայց, միևնույն ժամանակ, նոր տեսությունը պարունակում է հակասություններ, և նրա հարաբերությունը փաստերի հետ այդքան էլ ակնհայտ չէ: Հետևաբար, միակ մեթոդաբանական արժեքը, ըստ Լակատուսի, ոչ թե առանձին տեսությունն է, այլ տեսությունների շարքը կամ հետազոտական ծրագիրը [10,303-304]: Այլ կերպ ասած՝ հետազոտական ծրագրում կատարվող փոփոխությունների հետևանքով ընտրություն ենք կատարում մրցակցող գիտական տեսությունների միջև:

Հետպոստիվիզմի հաջորդ ներկայացուցիչ Պոլ Ֆեյերաբենդը առաջարկում է քննադատական ռացիոնալության սկզբունքը: Նա գտնում է, որ գիտության պատմության միջոցով կարելի է տեսնել, որ բոլոր համընդհանուր հասկացությունները չեն համապատասխանում ռացիոնալության պահանջին: Նույնիսկ տրամաբանական օրենքները անառարկելի իրողություններ չեն: Գիտնականները հաճախ ստեղծում են հակասող տեսություններ և ուշադրություն չեն դարձնում իրենց ստեղծած տրամաբանական անկոռեկտությանը [11, 325]:

Ֆեյերաբենդը փորձել է միջոցներ գտնել, որոնք թույլատրում են համեմատել այդպիսի տեսությունները: Համեմատությունը, ըստ բովանդակության կամ ճշմարտության մակարդակի, իհարկե, բացառված է եղել: Խոսելով այլ մեթոդների (չափանիշների) մասին՝ պետք է նշել, որ դրանք սուբյեկտիվ են այն իմաստով, որ դրանք ընդունելու համար դժվար է գտնել փաստարկներ, իսկ «ուրիշ մեթոդները» հաճախակի բերում են անհամատեղելի արդյունքների: Տեսությունը կարող է լինել ընդունելի, քանի որ տալիս է շատ կանխատեսումներ: Մյուս կողմից՝ տեսությունը կարող է գայթակղիչ թվալ՝ շնորհիվ իր տրամաբանական ճկունության, բայց «ներքին հարմոնյան» ի վիճակի է անհնարին դարձնել իր կիրառությունը իրարից զգալիորեն տարբերվող ոլորտներում:

«Չափանիշների անցման այս ձևը, չդիպչելով բովանդակությանը, տեսությունների ընտրության «ռացիոնալ» և «օբյեկտիվ» գործընթացը բարդացնում է՝ ստեղծելով կոնֆլիկտային իրավիճակ: Այստեղ պրոպագանդան մեծ դեր է խաղում, ինչպես լինում է բոլոր դեպքերում, երբ խաղի մեջ են մտնում ինքնակամ տարրեր», - գրում է Ֆեյերաբենդը [11, 501-502]:

Ավելին, Ֆեյերաբենդը փորձել է ցույց տալ, որ գիտության զարգացման մեջ ամեն մի նոր քայլ, անկասկած, կապված է գոյություն ունեցող ռացիոնալության նորմերի խախտման հետ: Նա անընդունելի է համարում այն մոտեցումը, որի համաձայն գիտական գիտելիքի և ոչ գիտականի միջև գոյություն ունեն օբյեկտիվ տարբերություններ, և պնդում է, որ գոյություն ունեն մի շարք տեսություններ, որոնցից յուրաքանչյուրը կարող է իր սկզբունքներով ավելի լավ

լինել, քան մյուսը, սակայն չկա որևէ երաշխիք, որ այդ տեսությունների միջոցով կարելի լինի բացահայտել բնության գաղտնիքները [12, 150]:

Ֆեյերաբենդը գտնում է, որ տեսությունների ընտրության կատարելագործման արդյունքում մրցակցող տեսություններից ոչ մեկին բացարձակ առավելություն չենք կարող տալ, քանի որ դրանք հավասարապես ինչ-որ բանի համար անհրաժեշտ են և, միևնույն ժամանակ, կարող են համարվել հերքված: Ի. Լակատոսն ընդունում է Պ. Ֆեյերաբենդի այն փաստարկը, որի համաձայն գիտության աճը չի կարելի համարել միայն առաջընթաց քայլերի հետևողականություն: Ֆեյերաբենդը տեսությունների անհամաչափելիության սկզբունքի միջոցով գալիս է այն եզրահանգման, որ մրցակցող տեսությունների միջև ընտրություն կատարելու համար չկա ռացիոնալ չափանիշ: Նա քննադատում է Լակատոսի կողմից առաջարկված մրցակցող գիտական տեսությունների ռացիոնալ ընտրության հայեցակարգը [12, 434-435]:

Այսպիսով, կարող ենք նշել, որ անհամաչափելիության սկզբունքը (տեսությունների էմպիրիկ բովանդակությունը հնարավոր չէ համեմատել) Ֆեյերաբենդի դեպքում մեթոդաբանական լուծում է ստանում. չկա մեթոդ՝ համեմատելու համար երկու տեսություններ: Ֆեյերաբենդի այս փաստարկը Լակատոսը չի ընդունում: Նա գտնում է, որ երկու մրցակցող տեսություններ չեն կարող լինել բացարձակ անհամաչափելի: Երբ երկու տեսություններ երկու տարբեր «լեզուներով» են խոսում, հենց այստեղից հետևում է, որ այդ տեսությունները մրցակցող չեն: Հակառակ դեպքում՝ նրանց միջև պետք է լինի թարգմանություն՝ մի տեսության լեզվից մյուսին:

Համակարգելով մրցակցող տեսությունների մեջ տեսության և փաստի փոխհարաբերության հարցը՝ պետք է նշել, որ այն հետոզիտիվիզմի ներկայացուցիչների դեպքում հստակեցվում է: Կունը և Պոպերը ընդգծում են փաստերի էական լինելը: Իսկ Կունի և Ֆեյերաբենդի հայացքները համընկնում են այն կարևոր հարցում, որ որոշ տեսությունների հերքման համար անհրաժեշտ է առնվազն մեկ նոր տեսություն: Այսպիսով, կարևորվում է այն հանգամանքը, որ տեսությունների ընտրությունը կախված է մեկ այլ տեսությունից, ինչը չէր նկատել Պոպերը:

Տեսությունների ընտրության ռացիոնալության Կունի չափանիշը օգտապատական բնույթ է կրում: Ֆեյերաբենդի տեսակետն ավելի ծայրահեղական է. չկա մեթոդ տեսություններն ընտրելու համար: Միակ սկզբունքը, որը չի հակասում գիտության զարգացմանը, «ամեն ինչ թույլատրելի է» սկզբունքն է: Ֆեյերաբենդի այս մոտեցումը խոցելի է, քանի որ նա ջնջում է թույլատրելիի և անթույլատրելիի

սահմանները գիտության մեջ, այսինքն՝ գտնում է, որ գիտական գիտելիքը ոչ գիտական գիտելիքից տարբերելու համար չկա ռացիոնալ չափանիշ:

Ընդհանրացնելով վերոնշյալը՝ կարելի է գալ այն եզրակացության, որ չնայած գիտականության չափանիշների վերաբերյալ հետազոտիվիզմի ներկայացուցիչների մշակած մոտեցումները խոցելի են, այնուամենայնիվ, գիտության պատմությունը ցույց է տալիս, որ գիտական հանրության կողմից ցանկացած նոր տեսության ընտրություն ռացիոնալ է: Ցանկացած մեթոդաբանական հայեցակարգը գիտության զարգացումը պատկերացնում և ներկայացնում է առանձնահատուկ ձևով: Օրինակ՝ ներքին պատմությունն ինդուկտիվիզմի դեպքում կազմված է անկասկածելի փաստերով ընդունված տեսություններից: Ներքին պատմությունը ֆալսիֆիկացիոնիզմի դեպքում բնութագրվում է տեսությունների համարձակ ենթադրությունների առատությամբ, որոնք միշտ պետք է ունենան մեծ բովանդակություն, քան իրենց նախորդները, և, առաջին հերթին, հաղթական որոշիչ փորձերի առկայությամբ: Եվ, վերջապես, հետազոտական ծրագրերի մեթոդաբանությունը խոսում է գլխավոր հետազոտական ծրագրերի տեսական և էմպիրիկ մրցակցության, գիտելիքի առաջընթաց և հետընթաց շարժերի և մի տեսության՝ մյուսի նկատմամբ աստիճանաբար առաջընթացի մասին: Այս բոլոր հասկացությունների համար բնութագրական է համոզմունքն այն բանի, որ ռացիոնալության չափանիշները հավերժական են և համընդհանուր: Ռացիոնալ հասկացությունները հենվում են տարբեր ժամանակաշրջաններում առկա տեսությունների կողմից օգտագործվող բանականության օրենքների վրա, դրա համար էլ բանականության օրենքները անփոփոխ են: Հետևաբար, եթե հաջողվի դրանք ձևակերպել տրամաբանական և մեթոդաբանական օրենքների ձևով, ապա կարելի է ստանալ չափանիշներ, որոնք միշտ կարող են օգնել՝ գնահատելու գիտության պատմության ցանկացած շրջան: Այսպիսով, գիտության պատմության ռացիոնալ վերակառուցումը միշտ կարող է լինել իրականանալի: Եթե տրված է գիտելիքի որոշակի վիճակ, ապա միշտ կարելի է վերակառուցել գործընթացը, որը հանգեցրել է այդ վիճակին: Պատմության «ընդօրինակման» ռացիոնալ գործընթացը նույնպես անվերջ է, ինչպես և անսահման է հենց գիտության զարգացումը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Богомолов А.С.** Наука и иные формы рациональности // Вопросы философии.- 1979.- N8.- С.102-106.
2. **Никифоров А.Л.** Рациональность и цель науки // Логика научного познания.- М.: Наука, 1987.- С.259-271.

3. **Швырев В.С.** О понятиях “открытой” и “закрытой” рациональности (рациональность в спектре ее возможностей) // Рациональность на перепутье.- М.: Росспэн, 1999.- С. 3-24.
4. **Кун Т.** Структура научных революций.- М., 2003.- 605с.
5. **Порус В.Н.** Парадоксальная рациональность // Рациональность на перепутье.- М.: Росспэн, 1999.- Книга 1.- 124 с.
6. **Поппер К.** Эволюционная эпистемология: подход и проблемы // Эволюционная эпистемология и логика социальных наук.- М., 2000.- 464 с.
7. **Барсегян А.** Лекции по философии.- Ер.: Асогик, 2006.-274 с.
8. **Поппер К.** Логика и рост научного знания.- М.: Прогресс, 1983.- 605 с.
9. **Поппер К.** Предложения и опровержения.- М.: АСТ, Ермак, 2004.- 638 с.
10. **Лакатос И.** Фальсификация и методология научно-исследовательских программ // Структура научных революций.- М., 2003.- 605 с.
11. **Фейерабенд П.** Объяснение, редукция и эмпиризм // Избранные труды по методологии науки.- М.: Прогресс, 1986.- 543 с.
12. **Фейерабенд П.** Против методологического принуждения // Избранные труды по методологии науки.- М.: Прогресс, 1986.- 543 с.

**Г.В. ГАЛСТЯН**

### **ПРОБЛЕМА ВЗАИМООТНОШЕНИЙ НАУЧНЫХ ТЕОРИЙ И КРИТЕРИЕВ РАЦИОНАЛЬНОСТИ В ПОСТПОЗИТИВИЗМЕ**

Рассматриваются вопросы выбора конкурирующих научных теорий и критериев рациональности среди основных представителей постпозитивизма.

**Ключевые слова:** научная теория, постпозитивизм, принцип рациональности, фальсификационизм, исследовательская программа, принцип несоизмеримости, научное знание, ненаучное знание.

**G.V. GALSTYAN**

### **THE PROBLEM OF INTERRELATION OF SCIENTIFIC THEORIES AND RATIONALITY CRITERIA IN POSTPOSITIVISM**

The issues on the selection of competing scientific theories rationality criteria among the main representatives of postpositivism are considered.

**Keywords:** scientific theory, postpositivism, principle of rationality, falsificationism, research program, principle of incommensurability, scientific knowledge, non-scientific knowledge.